



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն _____ Կենսաբանություն _____

Թեմա «Մարդու շնչառական համակարգ» թեմայի դասավանդումը
հեռավար ուսուցման ժամանակ _____

Կատարող _____ Պետրոսյան Լուսինե Ռազմիկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Կենս. Գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

1. Ներածություն.....էջ 3-6
2. Շնչառական օրգանների հիգիենա թեմայի դասավանդումը.....էջ 7-10
3. Եզրակացություն.....էջ 11
- 4 գրականություն.....էջ 12

Ներածություն

Ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.5-րդ կետի կարգավորվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են դրա կիրառման դեպքերը:

Հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով: Հեռավար կրթության հիմքը կազմում են տեղեկատվական տեխնոլոգիաները և հեռահաղորդակցության միջոցները:

Թույլատրվում է տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր տեխնոլոգիաների գույակցումը:

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը:

- Հեռավար կրթությունն իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:
- Հեռավար կրթություն կարող են կազմակերպել հանրակրթական հիմնական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները, ինչպես նաև Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում գործող հեռավար ուսուցման կենտրոնը՝ ՀՈԻԿ-ը:
- Հեռավար կրթության մասնակիցներն են սովորողները, ուսուցիչները, մանկավարժական աշխատողները, ծնողները կամ սովորողի օրինական ներկայացուցիչը, դպրոցում համապատասխան առարկայական ուսուցչի բացակայության դեպքում՝ ՀՈԻԿ-ի՝ առարկայական մասնագետները:
- Հեռավար կրթական ծրագրերի բովանդակությունը չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշյով սահմանվածից:

Հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել հետևյալ դեպքերում.

- Եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:
- Եթե հայտարարվել է արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակ (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն):

- Դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) կամ օտարերկրյա պետություններում ծնողների հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում:
- Այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք:
- Այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից:
- Այն անձանց համար, ովքեր պետք է մասնակցեն էքստեռն կարգով ավարտական քննություններին՝ հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ ստանալու նպատակով:
- Միյուրքում բնակվող, ինչպես նաև Հայաստան վերադառնալ ցանկացող ընտանիքների երեխաների համար, ովքեր լրացուցիչ կրթության միջոցով մտադիր են յուրացնել հիմնական ծրագրեր՝ ՀՀ-ում հանրակրթության մեջ ընդգրկվելու համար:

Վարձատրություն

Ամբողջ ուսումնական տարվա համար հեռավար կրթություն կազմակերպող ուսուցիչները վարձատրվում են ուսուցչի մեկ դրույքի չափով, իսկ մնացած դեպքերում՝ ժամավճարով՝ բացառությամբ արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում կազմակերպվող դասերից:

Կազմակերպման կարգը

- Հեռավար ուսուցումը կազմակերպվում է ըստ դասարանների՝ հանրակրթական ծրագրերին համապատասխան, այն ուսումնական հաստատությունում, որտեղ հաշվառված է սովորողը: Եթե տվյալ ուսումնական հաստատությունում բացակայում են հեռավար կրթության կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ դպրոցը չունի տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ, ապա հեռավար կրթություն կազմակերպվում է մեկ այլ ուսումնական հաստատության ուսուցչի կողմից՝ ՀՈՒԿ-ի աջակցությամբ:
- Հեռավար կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց պահանջները կատարած սովորողները գնահատվում են՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
- Հեռավար կրթության ուսուցման գործընթացը կազմակերպվում է ուսումնական հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցին համապատասխան, իսկ ուսումնական գործընթացի կազմակերպման պատասխանատուն տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալն է:
- Յուրաքանչյուր աշակերտի համար կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ուսումնական հաստատությունը կամ ՀՈՒԿ-ը բացում է անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով:

- Հեռավար կրթության միջոցով ուսուցումը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների 70%-ը աշակերտների ոչ պակաս քան 90%-ը յուրացնում են SՏՏ միջոցով: Հեռավար կրթության գործընթացից դուրս մնացած աշակերտների համար դասերի յուրացումը կատարվում է անհատական պարապմունքների միջոցով՝ ուսումնական հաստատության կամ ՀՈՒԿ-ի սահմանած եղանակով:
- Հեռավար կրթության ընթացքում սովորողների ընդունելությունը, ինչպես նաև փոխադրումը, տեղափոխումը, ազատումը ուսումնական հաստատությունն իրականացնում է առկա ուսուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հեռավար ուսուցման ուսումնամեթոդական նյութերը տեղադրվում են հեռավար ուսուցման համալիր էջում՝ heravar.armedu.am, որն հասանելի է բոլոր ուսումնական հաստատությունների համար: Ուսումնական հաստատությունը սեփական նախաձեռնությամբ կարող է մշակել նոր ուսումնամեթոդական նյութեր՝ առարկայի ծրագրին, ուսումնական պլանին և պետական չափորոշյին համապատասխան:

Տեխնիկայի զարգացումը լայն հնարավորություններ է ընձեռում կենսաբանության դասաժամերը դարձնել առավել արդյունավետ: Իսկ հեռավար ուսուցման ժամանակ կենսաբանության դասաժամերը հնարավոր է հագեցնել տեսանյութերով և նկարներով, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում աշակերտներին ավելի տեսանելի բացատրել նյութը: Դրա շնորհիվ կարող ենք խթանել սովորողների ստեղծագործ մտածողությունը, բարձրացնել հետաքրքրասիրությունը կենսաբանությունն առարկայի նկատմամբ:

Ուսուցիչների համար առավել արդյունավետ է դասընթացի յուրացումը ստուգել թեստային աշխատանքի միջոցով, որոնք հեռավար ուսուցման ժամանակ կատարվում են ավտոմատացված կերպով, որի համար ուսուցիչը լրացուցիչ ժամանակ չի ծախսում: Հեռավար կրթության ընթացքում կարող ենք ստեղծել կենսաբանությունից խաղեր, որնք լրացուցիչ խթան են հանդիսանում սովորողների համար:

Հետազոտության արդիականությունը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ համաճարակային և առողջական որոշակի խնդիրների պատճառով հանրակրթական դպրոցներում աշակերտները ժամանակավոր չեն կարողանում հաճախել դպրոց և չեն կարողանում օգտվել Մահմանադրությամբ ամրագրված իրենց կրթության իրավունքից: Կրթության շարունակականությունը ապահովում ենք հեռավար կրթության միջոցով:

Հեռավար կրթության խնդիրները.

1. Կապի միջոցների խափանումները կամ բացակայությունը,
2. Կայուն և արագ ինտերնետ կապի բացակայությունը,

3. Ուսուցիչների և աշակերտների միջև հուզական կապի բացակայություն,

4. Երեխաները հանձնարարությունները կարող են կատարել ընտանիքի անդամների օգնությամբ:

Հեռավար կրթության առավելությունները.

- Անկանխատեսելի իրավիճակներում հնարավորություն է տալիս չընդհատել ուսուցման գործընթացը
- Տեղեկատվության մեծ ծավալ կարող ենք հաղորդել սովորողներին
- Խնայողական է, ավելի քիչ ծախսեր է պահանջում
- Ընտանիքի բոլոր անդամներին ներգրավում է ուսուցման գործընթացին:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտների ձեռք բերած գիտելիքների արդյունավետությունը կենսաբանություն առարկայից՝ հեռավար ուսուցման ժամանակ:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը ուսումնասիրել ենք «Մարդու շնչառական օրգանների հիգիենա» թեմայով ստեղծած դասընթացի շրջանակներում:

Հեռավար ուսուցման ժամանակ «Մարդու շնչառական օրգանների հիգիենա» թեման դասավանդելու համար ուսուցման օնլայն հարթակներից **moodle**-ում ստեղծել ենք դասընթաց, որը կարող է օգնել ուսուցիչներին հեռավար ուսուցման ընթացքում: Դասընթացն ընդգրկում է.

- Տեսական մաս
- Սահիկահանդես
- Գործնական աշխատանք
- Գիտելիքների ստուգում :

Շնչառական օրգանների հիգիենա թեմայի դասավանդումը

Տեսական մաս: Որպես տեսական մասի հաղորդման հիմնական բաղադրիչ կիրառել ենք բանավոր խոսքի մեթոդը և սահիկաշարը: Կից տեղադրում ենք նաև սահիկահանդեսը (հավելված 1), որի օգնությամբ ուսուցիչը կարող է բանավոր խոսքը գուգակցել տեսանյութով և նկարներով: Գիտնականներն ապացուցել են, որ մարդը հիշում է լսածի 20% - ը, տեսածի 30% - ը և 50% - ը, ինչ նա տեսնում և լսում է միաժամանակ: Որպեսզի ուսուցիչը կարողանա դասն արդյունավետ և ամբողջությամբ ներկայացնել աշակերտներին, ներկայցնում ենք յուրաքանչյուր ենթաթեմայի հաղորդման համար անհրաժեշտ ժամանակը.

Տեսական մասի հաղորդում

Շնչառական օրգանների հիգիենա-5 րոպե

Ծիսելը ռիսկի գրոծոն-10րոպե

Առաջին օգնությունը շնչահեղձության, ջրահեղձության, էլեկտրահարության դեպքերում- 10 րոպե

Այսպիսով, տեղեկատվության ընկալման և մտապահման գործընթացի հեշտացումը վառ պատկերների միջոցով ցանկացած ժամանակակից ներկայացման հիմքն է: Աշակերտներին ներկայացնում ենք թե ինչպես են մեր օրգանիզմ ներշնչման պահին օդի հետ շնչուղիներ անցնում հիվանդաբեր բակտերիաներ, փոշի, որոնց մի մասը կայցում է վերին շնչառական ուղիների լորձաթաղանթի թարթիչավոր էպիթելին և վնասազերծվում լորձունքի կողմից: Սակայն այդ մանրէների մի մասը կարող են անցնել թոքեր և առաջացնել թոքաբորբ:

Բացատրում ենք, որ կանխելու համար անհրաժեշտ է.

- բնակարանը մաքրել խոնավ շորով,
- պահպանել անձնական հիգիենան,
- կոփել օրգանիզմը:

Մարդաշատ վայրերում ` օդում թթվածնի պակաս է առաջանում և ավելանում է ածխաթթու գազի և ջրային գոլորշիների քանակը: Այդպիսի պայմաններում մարդիկ դառնում են քնկոտ, արագ հոգնում են, գանգատվում գլխացավից:

Մարդու առողջության համար անհրաժեշտ է`

- թարմ օդ,
- շնչառության ճիշտ ռիթմ,
- գրասեղանի առջև ճիշտ նստելը,
- շնչառական մարզումներ կատարելը,
- զբաղվել սպորտով,
- քայլելիս ընդունել ուղղաձիգ կեցվածք,
- քթով շնչելը,
- խուսափել բարձր գոռալուց,
- մաքուր օդում հաճախ զբոսնելը:



Ծխելը` ռիսկի գործոն : Թեման ունի դաստիարակչական բաղադրիչ: Ծխելը վտանգավոր է երիտասարդների ,հատկապես դեռահասների համար: Ծխախոտի ծուխը վտանգավոր է նաև շրջապատի մարդկանց համար,որոնք համարվում են պասիվ ծխողներ:

Ծխող մարդիկ հաճախ հիվանդանում են հետևյալ հիվանդություններով.

- **Բրոնխիտ:** Բրոնխիտը բրոնխների բորբոքումն է, որն առաջացնում է հազ: Այն արտահայտվում է խորխարտադրությամբ, սուլող շնչառությամբ, շնչարգելությամբ և կրծքավանդակի ցավով: Բրոնխաբորբը կարող է լինել սուր և քրոնիկ: Որպեսզի չհիվանդանանք բրոնխիտով, պետք է օրգանիզմը կոփենք:



- **Թոքերի բորբոքում:** Թոքաբորբը պատկանում է սուր ինֆեկցիոն հիվանդությունների շարքին, մահացության հիմնական պատճառների շարքում զբաղեցնում է չորրորդ տեղը: Հիվանդության պատճառը շնչառական օրգանների ախտահարումն է բակտերիաներով, վիրուսներով, ատիպիկ հարուցիչներով, սնկերով՝ թուլացած դիմադրողականության ֆոնին:



- **Ասթմա:** Ասթման շնչառական ուղիների բորբոքային հիվանդությունն է: Բրոնխիալ ասթման քրոնիկական կրկնվող վարակային կամ ոչ վարակային բնույթի հիվանդություն է, որի պարտադիր կլինիկական նշանը շնչահեղձության նոպան է: Ասթման բուժում չունի: Ախտանիշները կարող են կանխել խուսափելով խթանիչներից, ինչպիսիք են պերգենները և գրգռիչները:



- Տուբերկուլոզ:** Տուբերկուլոզը հիմնականում ախտահարում է թոքերը, սակայն կարող է տեղակայվել նաև այլ օրգաններում: Մարդու իմունային համակարգը սովորաբար կարողանում է կանխարգելել հիվանդության զարգացմանը: Որպեսզի տուբերկուլոզը կլինիկապես ի հայտ գա, կարևոր նշանակություն ունեն կյանքի անբարենպաստ պայմանները և օրգանիզմի դիմադրողականության անկումը:




Ներկայացնում ենք նաև ծխախոտի մեկ զլանակում պարունակվող վնասակար նյութերը:



Առաջին օգնությունը շնչահեղձության, ջրահեղձության, էլեկտրահարության դեպքերում:

Հետևյալ ենթաթեմայի նկարագրումից հետո գիտելիքները ամրապնդում ենք գործնական աշխատանքով: Տեղադրում ենք գործնական աշխատանքի հղումը՝ արհեստական շնչառության վերաբերյալ <https://elearning.amedu.am/mod/url/view.php?id=43911>, որը երեխաները կարող են կատարել տանը:

Թեմայից ստացած գիտելիքները ստուգում ենք օնլայն թեստի միջոցով <https://elearning.amedu.am/mod/quiz/view.php?id=45406>, որի դրական կողմն այն է, որ ուսուցիչը ժամանակ չի ծախսում ստուգման և գնահատականները հայտելու համար: Սովորողն իր կատարած աշխատանքի սխալ և ճիշտ պատասխանները, ինչպես նաև գնահատականները իմանում է անմիջապես թեստին պատասխանելուց հետո: Թեստի արդյունավետության մասին վկայում է հետևյալ աղյուսակը, որը կազմվել է սովորողների գիտելիքների ստուգումից հետո: Թեստը անցկացրել ենք Խաչատուր Աբովյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտների գիտելիքները ստուգելու համար: Մասնակցել է 58 աշակերտ:



Եզրակացություն

Հեռավար ուսուցումը հանդիսանում է լավագույն լուծումը համաճարակային իրավիճակներում դասաընթացի անընդհատությունն ապահովելու գործում: Ուսուցման այս ձևն ինչպես երևում է սովորողների վերջնանդուքում գիտելիքների ստուգումից, տվել է դրական արդյունք սովորողների շրջանում: Իսկ դասաընթացի արդյունավետության և մոտիվացիա բարձր աստիճանը երևում է նաև երեխաների կողմից ինքնուրույն սահիկահանդես և խաղեր պատրաստելու ձգտումից:

Համացանցը լայն հնարավորություն է տալիս դասը հագեցնել տեսանյութերով և դիդակտիկ նկարներով: Իսկ այս եղանակով ստեղծված թեստային աշխատանքները ստուգվում են ավտոմատացված սկզբունքով, որի արդյունքում սովորողն անմիջապես տեսնում է սխալ և ճիշտ պատասխանները և գնահատականը, իսկը ուսուցիչը ստուգման համար ժամանակ չի ծախսում:

Արդյունքում.

- Օնլայն դասարան ստեղծելու հնարավորություն
- Աշակերտների մոտ ձևավորվեցին համացանցի աղբյուրների հետ աշխատելու հմտություններ:
- Մեծացավ աշակերտների հետաքրքրությունը և ներգրավվածության աստիճանը:
- Փոխվեց դասավանդման պրոցեսում ուսուցչի դերը:
- Երեխաները սիրով մասնակցում էին ու ակտիվ քննարկում `ավարտից հետո և անհամբեր սպասում հաջորդ Quizizz-ին:

Այսպիսով, կարող ենք հստակ ասել, որ հեռավար կրթության ժամանակ կենսաբանության դասավանդումը համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցման ավանդական և այլ միջոցների համեմատ ունի անվիճելի առավելություններ և ուսումնական գործընթացի հաջողությունը երաշխավորված է:

Գրականություն

1. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142945>
2. <https://www.google.com/>- նկարներ
3. <https://elearning.armedu.am/my/>
4. Ս. Հ. Սահակյան, Տ.Վ. Թանգամյան, Գ.Ի. Միրզոյան-Կենսաբնագիտություն, Մարդ, Երևան 2014
5. <https://escs.am/am/news/6621?fbclid=IwAR2XkUfUznOxany1A7dHcLDBBFTHPpriPZxo69ee8xizWTjP0ZQgOYbpwjs>



Շնչառություն
L..pptx

Հավելված